ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

թիվ 31-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի ԹԻՎ 25-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-34-րդ հոդվածների և ղեկավարվելով ՀՀ ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 4-Լ հրամանով հաստատված հավելվածի 19-րդ կետի 5-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Դադարեցնել ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայություն մոնիթորինգի և վերլուծության բաժնի ծառայողական քննությունների իրականացման բաժանմունքի գործունեությունը:

2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2020 թվականի հուլիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության պարեկային ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 25-Լ հրամանով հաստատված հավելվածի.

1) 13-րդ կետի 2-րդ ենթակետում «, վերլուծության և ծառայողական քննությունների իրականացման» բառերը փոխարինել «և վերլուծության» բառերով.

2) 17-րդ կետի 8-րդ ենթակետում «ներկայացումն» բառից հետո լրացնել «ՀՀ ներքին գործերի նախարարության» բառերը, իսկ «(ծառայողական քննությունների իրականացման բաժանմունքին)» բառերը հանել.

3) 19-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

3. ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության պետին՝ Պարեկային ծառայությունում գտնվող ծառայողական քննության նյութերը սահմանված կարգով և ժամկետներում փոխանցել ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությանը:

4. Հրամանը ծանոթացնել ՀՀ ՆԳՆ ոստիկանության իրավասու ծառայողներին:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

« 14 » 11. 2023թ.

քաղ. Երևան